


տասնմեկերորդ
խնձոր











կու գա՜յ, կու գա՜յ,
ի՞նչ կու գայ։

փաթի՛լ, փաթի՛լ,
ձիւն կու գայ։





կու գա՜յ, կու գա՜յ,
ի՞նչ կու գայ.

կաթի՛լ, կաթի՛լ,
անձրեւ կու գայ.



կու գա՞յ, կու գա՞յ,
ի՞նչ կու գայ.

հայրի՛կ, հայրի՛կ,
կարկուտ կու գայ.



ամպիկները բարկացան.

տո՛ւմ, տո՛ւմ, որոտո՛ւմ.



ամպիկները զայրացան.

ճա՛կ, ճա՛կ, կայծակ.





անձրեւ կու գայ,
ձիւն կու գայ,
արամիկը կը խաղայ·
հովանոցը կը բանայ,
անձրեւին փակ կը խնդայ,
հա՛, հա՛, հա՜.









անձրեւ թող գայ ,
ձիւն թող գայ ,
արամիկը թող խաղայ .
հովանոցը թող բանայ ,
անձրեւին տակ թող խնդայ ,
հի՛ , հի՛ , հի՜ .



կայծա՛կ, փայլակ, որոտու՛մ,
երկինքին մէջ իրարանցու՛մ.



հովանոցը կայ, կոթը չկայ։
կոթը կայ, հովանոցը չկայ...

